**ՄՐՑՈՒՅԹ՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ (4 ԴԱՍԱԺԱՄ), ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ (7 ԴԱՍԱԺԱՄ), ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ (8 ԴԱՍԱԺԱՄ), ԴԱՍՎԱՐԻ (20 ԴԱՍԱԺԱՄ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
•Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
•Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
• Անձը հաստատող փաստաթուղթ,
• «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
•Ինքնակենսագրություն (Ձև 5),
•Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
• ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
•Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
• Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան **սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12-ին**, Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 35:
Տեղեկությունների համար զանգահարել (0322) 4-46-96 հեռախոսահամարով: